Հայ գրականություն, Հուշագրություն
13+

Շիրվանզադե
Խրիմյան Հայրիկ

Հայ գրականության ապագա պատմագիրն անկասկած չի մոռանալ Խրիմյան Հայրիկի անունը իբրև գրողի, բանաստեղծի թե բանասերի, որը կամենաք:

Ինքը Խրիմյանը իրան ավելի բանաստեղծ էր համարում, քան կաթողիկոս, և գրիչը նրան ավելի էր զբաղեցնում, քան Էջմիածնի գահը:

Ես շատ բաներ չունիմ ասելու Խրիմյանի մասին, որովհետև հազիվ ես մի 10 անգամ տեսնված լինեմ նրա հետ: Բայց թվում է ինձ, որ իմ գիտցած մի քանի գծերը հետաքրքրությունից զուրկ չեն և կարող են մի որոշ նյութ տալ ապագա պատմաբանին այդ բացառիկ մարդու բնավորությունը պատկերացնելու համար:

Խրիմյանը, ինքը լինելով բարձրահասակ, պարթև, մի տեսակ արհամարհանքով էր վերաբերվում դեպի փոքրահասակ մարդիկ: Հիշում եմ հետևյալը: Խրիմյանի առաջին անգամ Կաթողիկոս ընտրվելուց հետո, Թիֆլիս մտնելու օրն էր: Երկաթուղու կայարանը լիքն էր բազմությամբ: Ներկա էին բազմաթիվ պատգամավորություններ, ռուս կառավարության ներկայացուցիչները մի խումբ գեներալներ և պաշտոնյաներ, վրացի իշխաններ և Թիֆլիսի քաղաքային ինքնավարությունը իր ամբողջ կազմով:

Ընդունելության առաջին խոսքն արտասանեց քաղաքագլուխ Պողոս Իզմայլյանը, մի փոքրահասակ մարդ: Ճառը, որ թարգմանեց ռուսերենից հայերեն Խորեն եպիսկ. Ստեփանեն, խորը տպավորություն գործեց Խրիմյանի վրա: Բայց նրա բնությունն ավելի զորեղ գտնվեց, քան տպավորությունը: Նա քաղաքագլխին ոտքից մինչև գլուխ նայեց և հարցրեց.

— Դո՞ւն ես գրել այդ ճառը:

— Այո, Ձերդ Սրբություն, — պատասխանեց Իզմայլյանը հայերեն:

— Դուն այդպես պզտիկ, ճառդ այդչափ աղվոր, շնորհակալ եմ... — ասաց Խրիմյանը:

Քաղաքագլուխը շփոթվեց, մենք, հայերս, նույնպես, որովհետև օտարները պահանջ ունեին, որ Հայրիկի յուրաքանչյուր բառը թարգմանվի ռուսերեն:

Էջմիածնում Խրիմյանին, ի միջի այլոց, ներկայանում է և մեր բանաստեղծներից մեկը իր ամուսնու հետ: Տիկինը փոքրահասակ է:

Խրիմյանը նայելով նրան, դառնում է բանաստեղծին.

— Ա՞դ է քեզ ոգևորում բանաստեղծություններ գրելու:

— Այո՛:

— Ձավակս, աղեկ, որ չարիքներեն փոքրագույնն ես ընտրել:

Տիկինը վրդովվում է, բանաստեղծը՝ շփոթվում:

***

Խրիմյանը հումորիստ էր: Ամենալուրջ և ամենահանդիսավոր պահերին անգամ նա չէր մոռանում իր բնածին հումորը:

Առաջին քարոզն էր Թիֆլիսի Վանքի տաճարում: Բավական երկար քարոզ: Սեղանի վրա դրված էր մի բազկաթոռ, Խրիմյանը խոսում էր ոտքի վրա: Քարոզի կեսին նա ասաց.

— Շտէ այդպես:

Եվ նստեց բազկաթոռի վրա: Դպիրների խումբը մի քահանայի ղեկավարությամբ, կարծելով, որ Հայրիկն ավարտեց քարոզը, սկսեց երգել «Հայր մեր»: Հանկարծ ոտքի ելավ Խրիմյանը:

— Համբերիր, տեր պապա, ես խոսքս տակավին չեմ ավարտել, — ասաց նա, — անոթի ես, մի շտապիր, կրնաս քիչ ուշ ճաշել:

Մենք դարձյալ շփոթվեցինք: Տաճարը լիքն էր օտարականներով:

***

Խրիմյանը հանճարեղ հռետոր էր: Հանճարեղ ոչ իր պերճախոսությամբ, այլ մտքերի սրությամբ և համեմատությունների սրամտությամբ: Մինչև նրա Կովկաս հասնելը ընդառաջ էին գնացել մի քանի «քաղաքագետներ» նախազգուշացնելու համար, որ նա չլինի թե ռուս կառավարությունը որևէ կերպ քննադատե:

— Աղեկ, — պատասխանել էր Հայրիկը, — ես ամենուրեք կփառաբանեմ անոր քաղաքականությունը:

Եվ իրավ Բաթումից մինչև Թիֆլիս նա գովաբանել էր ռուս կառավարությունը: Թիֆլիսում, իր առաջին քարոզում, Վանքի մեջ նա դարձյալ գովաբանեց, համեմատելով ռուսահայերի կացությունը թուրքահայերի վիճակի հետ:

— Ձեր բարեկեցությունը, — ավելացրեց նա, — դուք պարտք եք ռուսաց ցարին բարեսրտությանը: Եղեք անոր հավատարիմ, զավակներս, վասնզի ժողովուրդը ցարին ծառայելու համար է:

Հանկարծ հեղափոխականի հոգին զարթնեց նրա մեջ: Նա մի վայրկյան լռեց և, գլուխը հպարտ բարձրացնելով, գոչեց.

— Սակայն, կայսրն էլ ժողովուրդին համար է: Գյուղացու չքավոր խրճիթին ու կայսեր պալատին մեջ կա էլեկտրական թել մը: Եթե հոս փլչե գյուղացու խրճիթ, հոն պալատին մեջ կը դղրդա սյուն մը:

Ունկնդիրների բազմությունը զգաց, թե ով է Խրիմյանը:

***

Թիֆլիս եկած ժամանակները ես Խրիմյանի մոտ գնում էի երբեմն:

Մի օր նա ասաց.

— Նոր բանաստեղծություն մը գրել եմ: Կամի՞ս կարդամ:

— Խնդրեմ, Հայրիկ:

Դա մի բավական երկար երկ էր. Հայրիկը բանաստեղծորեն նկարագրում էր եվրոպական պետությունների ժամանակակից քաղաքական կազմությունը:

Նրա մահից հետո այդ ոտանավորը տպվեց, հետո թարգմանվեց ռուսերեն:

Այնտեղ Հայրիկը, զարմանալի գուշակությամբ նախատեսել էր համաշխարհային պատերազմը և նրա հետևանքները: Դա մի տեսակ մարգարեություն էր, որ ապշեցրեց ռուս ընթերցողներին:

Մի պետություն միայն մոռացել էր Հայրիկը: — Իտալիան:

Ես հիշեցրի նրան:

— Աղեկ ըսիր, անոր մասին ալ կը գրեմ, — ասաց Հայրիկը:

Այնուհետև ամեն անգամ երբ ես գնում էի Հայրիկի մոտ, նա ինձ համար կարդում էր իր նոր գործերը բարձրաձայն: Փույթ չէ, որ դուրսը սպասում էին Եպիսկոպոսները այս կամ այն գործի համար:

***

Շատ քչերին էր հայտնի, որ Խրիմյանը իր արտաքին համեստության տակ պահում էր խոշոր ինքնավստահություն: Ես այդ նկատեցի առաջին իսկ օրը, երբ եկավ Թիֆլիս:

Առաջնորդարանի դահլիճում ժողովել էին պատգամավորությունները նորընտրյալին շնորհավորելու համար: Ես Շամախու թեմի ներկայացուցիչն էի: Ինձնից առաջ մի երկար ուղերձ կարդաց Բաքվի մարդասիրական և կուլտուրական ընկերությունների ներկայացուցիչը: Ուղերձը լեցուն էր զանազան խորհուրդներով: Դա ուղղակի մի քաղաքական ծրագիր էր, որ առաջարկում էր Հայրիկին իրագործելու Կաթողիկոսության ժամանակ: Ես նկատեցի, որ Հայրիկի պայծառ դեմքը հետզհետե մթնում է, և նա զանազան ներվային շարժումներ է անում: Որոշեցի մի փոքր մեղմացնել նրա գեշ տպավորությունը: Ես ասացի, թե թեմը, որի ներկայացուցիչն եմ, միայն մի ցանկություն ունե, այն է, որ Հայրիկը կաթողիկոսական գահի վրա մնա երկար, երկար տարիներ: Ինչ վերաբերվում է գործունեությանը, ոչ ոք այնքան լավ չգիտե հայ եկեղեցու և հայ ժողովրդի պահանջները, որքան Հայրիկը, և համոզված ենք, որ նա կկարողանա լրացնել այդ պահանջները:

Հայրիկի դեմքը նորեն պայծառացավ:

— Մոտեցիր, — ասաց նա, — մոտեցիր:

Ես մոտեցա և նրա աջը համբուրեցի:

— Ձավակս, աղեկ ճառեցիր, — ասաց նա և համբուրեց ինձ:

Դժբախտաբար մեծ էր այն մարդկանց թիվը, որ չգիտեին հարգել Հայրիկի նրբազգացությունը և շարունակ ձանձրացնում էին նրան իրենց անկոչ խորհուրդներով: Երբեմն նրա մոտ գալիս էին իրանց «քաղաքական գրագիրներով» մարդիկ, որոնց սահմանափակ խելքը չէր կարող ըմբռնել Խրիմյանի մեծությունը: Ամենից ավելի այդ մեծությունը չէին տեսնում նրանք, որոնք ամեն օր Խրիմյանի քով էին, այն պարզ պատճառով, որ հոյակապ արձանի տակ կանգնողները չեն կարող տեսնել նրա բարձրությունը:

***

Խրիմյանի ազատամտությունը ոմանց զարմացնում էր, ոմանց վրդովեցնում: Մինչև նրա Կաթողիկոս ընտրվիլը ապահարզանի խնդիրը մի ծանր լուծ էր Էջմիածնի վրա: Նրա նախորդները, կես դարի ընթացքում, հազիվ 6-7 ամուսնալուծություն էին թույլ տվել: Խրիմյանը առաջին իսկ տարին թույլ տվեց 57 ամուսնալուծություն: Մի անգամ Էջմիածին է գալիս մի պարոն բողոքելու, որ Խրիմյանը թույլ է տվել իր կնոջը բաժանվել և ամուսնանալ մի ուրիշի հետ:

— Սիրո՞ւմ էիր ամուսնուդ, — հարցնում է Հայրիկը վրդովված պարոնին:

— Ո՛չ:

— Ան ալ քեզի չէր սիրում: Ուստի բաժանեցի:

— Բայց, Վեհափառ, դուք նրան իրավունք եք տվել ամուսնանալու մի ուրիշի հետ և դրանով ինձ զրկել եք այդ իրավունքից: Ռուսական օրենքով երկու ամուսնալուծվածներից միայն մեկը կարող է ամուսնանալ, ինչո՞ւ այդ մեկը կինս է և ոչ ես:

— Ըշտե, գնա դու էլ ամուսնացիր:

— Ուրեմն թո՞ւյլ եք տալիս:

— Հարկավ:

— Բայց օրե՞նքը:

— Օրենքն իմ խոսքն է: Քալե՛:

Եվ Խրիմյանը ստորագրում է պարոնի ամուսնության թուղթը:

Խրիմյանի այդ ազատամտությունը այնքան կատաղեցրեց խավարամիտներին, որ նրանք գաղտնի բողոքեցին ռուս կառավարությանը, և հետևանքն այն եղավ, որ ամուսնալուծության իրավունքը կաթողիկոսից խլվեց և տրվեց Սինոդին...

Մարդիկ զարմանալի փոքրանում էին Խրիմյանի խոսակցության մեջ:

— Ի՞նչ տպավորություն թողեց ձեզ վրա փոխարքա Վորոնցով-Դաշկովը, — հարցրի ես նրան այն օրը, երբ առաջին անգամ տեսնվել էր կոմսի հետ:

— Թույլ է, ձայն չունե, խոսքը չի ազդեր, — պատասխանեց Հայրիկն արհամարհանքով — ան Գոլիցին քիչ մը կազդեր իր խոսելու եղանակով:

Նա ոչ մի նշանակություն չէր տալիս կայսեր հետ իր տեսնվելուն: Խոսում էր Նիկոլայ Բ-ի մասին իբրև մի հասարակ պատանու վերաբերմամբ:

— Պզտիկ մարդ մըն է, կայսերական շուք չունե: Առհասարակ Խրիմյանը մարդկանց հետ վերաբերվում էր մի տեսակ անփութությամբ և արհամարհանքով: Չկար նրա համար ոչ իշխան, ոչ ծառա, ոչ հարուստ, ոչ էլ աղքատ: Ամենքը միևնույն արժեքն ունեին նրա աչքում: Այդ տեսակետից նա կատարյալ բանաստեղծ էր: Միայն մի բանի առաջ էր խոնարհում նրա անկախ ու հպարտ հոգին — ժողովրդի: Հիշում եմ այն պահը, երբ Ներսիսյան դպրոցի երգեցիկ խումբը նրա առջև երգեց Վանի մի ինչ-որ ժողովրդական երգ: Պետք է տեսնեիք Խրիմյանին այդ պահին: Այդ հսկա մարդը ժողովրդական վշտալի երգի տպավորությամբ կծկվեց, փոքրացավ: Նրա նահապետական պայծառ դեմքը մռայլվեց, և նրա կրծքից դուրս թռավ մի ծանր, երկարատև հառաչանք: Եվ թվաց ինձ այդ պահին, որ դա ինքը հայ ժողովուրդն է իր դարավոր տառապանքներով:

— Անտակտ էր, — ասում և կրկնում են Խրիմյան Հայրիկի հակառակորդները:

Գուցե անտակտ էր իբրև Կաթողիկոս, բայց մեծ էր Խրիմյանը նույնիսկ իր անտակտության մեջ:

***

Խրիմյան Հայրիկը, բացի հայերենից, ոչ մի լեզու չ գիտեր: Ես, իհարկե, հաշվի չեմ առնում տաճկերեն լեզուն, որ ոչ մի նյութ չէր կարող տալ նրա ուղեղին: Զարմանալի էր, որ նա կարողանում էր միայն հայերենով հետևել եվրոպական ոչ միայն քաղաքականությանը, այլ գրականություններին ու արվեստներին:

Մի անգամ նա ինձ հետ խոսեց թատրոնի մասին: Մարդը իր կյանքում թատրոն չէր տեսել, սակայն ինձ զարմացրեց իր խելացի հայեցողությամբ այն արվեստի մասին, որ ամենից ավելի կղերականությունից է հալածվել:

— Թատրոնը, — ասաց նա, — երկրորդ եկեղեցի է: Անիկա տեսակ մը տաճար է մարդկային բարքերը կրթելու և հոգին բարձրացնելու համար:

Իշխանավորի այդ ազատ հայեցողության շնորհիվ էր, որ հայ վարդապետներն ու քահանաները այնքան համարձակ հաճախում են այսօր թատրոնը, հակառակ ավանդամոլների բողոքներին:

Ազատ և անկախ էր Խրիմյանի հայացքը և գրականության մասին: Նրան չէր շփոթեցնում բարքերի նկարագրությունը: Նա միայն պահանջում էր չափավորություն: Այն, ինչ որ ռեալիզմի հատկանիշն է, վասնզի նա գիտեր նատուրալիզմի և ռեալիզմի մեջ եղած ահագին տարբերությունը: Մի բան, որ չգիտեին և չգիտեն Խրիմյանից ավելի շատ կարդացած մարդիկ:

***

Աննման էր Խրիմյան Հայրիկի արտաքինը: Եթե Ադամյանի միայն գլուխն էր գեղեցիկ, Խրիմյանը ոտքից մինչև գլուխ մարմնացած գեղեցկություն էր և առնական գեղեցկություն: Ոչ մի լուսանկարով չի կարելի պատկերացնել Խրիմյանի դեմքը, մանավանդ խոշոր կապտագույն աչքերի արտահայտությունը: Ցավալի է, որ չգտնվեց այնչափ տաղանդավոր նկարիչ, որ կարողանար տալ այդ աննման պատկերը:

Երբ գնացքը կանգ առավ կայարանում, և Խրիմյանը դուրս եկավ պլատֆորմի վրա, բոլոր ներկա եղողները միաժամանակ շշնջացին:

— Ինչ վեհ կերպարանք:

Նա ամբողջ գլխով բարձր էր իր շրջապատողներից: Արծվաքիթ էր նա, հպարտ գծավորված դեմքով: Չկար նրա այտերի վրա եպիսկոպոսներին հատուկ կարմրությունը: Միապաղաղ էր նրա դեմքի գույնը և ճերմակ: Մի բան միայն փչացնում էր այդ դեմքի գեղեցկությունը ծխախոտի դեղնագույն հետքը ընչացքի վրա:

***

Խրիմյանը կաթողիկոսացու չէր, զուր ընտրեցինք նրան, — ասում էին Հայրիկի բարեկամները:

— Տեսա՞ք, որ սխալվեցիք, ասում էինք, ասում էինք, — չարախնդությամբ աղաղակում էին Հայրիկի նախկին և նոր հակառակորդները:

Այո, բոլորովին ճիշտ է, Խրիմյանը Կաթողիկոս չէր, այն իմաստով, ինչ որ պահանջում էին ժամանակն ու հանգամանքները: Նա ռուս կառավարության նենգամտության դեմ պայքարելու համար չէր ծնված և ոչ էլ Էջմիածնի անխուսափելի բանսարկությունների հետ կռվելու համար: Նրա մաքուր հոգին գարշում էր և նենգամտությունից, և բանսարկությունից: Իսկ երբ գարշում ես մի թշնամուց, չես կռվում նրա հետ, այլ արհամարհում ես, վասնզի կռվելու համար պետք է դիմես հավասար զենքի: Խրիմյանը չէր ուզում այդ զենքն իր ձեռքն առնել: Նա Ներսես Աշտարակցի չէր:

Նայեցեք այդ երկու բացառիկ դեմքերի պատկերներն և տեսեք ինչ ահագին տարբերություն կա նրանց մեջ:

Խրիմյանը արհամարհում էր իր շրջապատող հանգամանքները և այն միջավայրը, ուր ձգել էր նրան ճակատագիրը: Միևնույն ժամանակ նա և տառապում էր իր հոգու խորքում: Այդ հայտնի էր միայն այն մարդկանց, որոնք գիտեին նրա պարզ խոսքերի ետին իմաստն հասկանալ և նրա պայծառ դեմքի վրա կարդալ նրա ներքին վիշտը:

Խրիմյանը իր ժամանակից դուրս էր, չեմ ասում վեր կամ վար, այլ դուրս: Նա ուրիշ աշխարհի և ուրիշ շրջանի մարդ էր: Քրիստոսի ժամանակ նա կլիներ մեկը նրա առաքյալներից, Սոկրատի շրջանում նա կլիներ փիլիսոփա: Նրա միակ զենքն էր իր հոգին, իր միտքը, իր հեզությունը և ներողամտությունը:

Ահ գիտեմ, այս տողերը կարդալիս կան մարդիկ, որ պիտի ժպտին հիշելով Խրիմյանի այն վայրկյանները, երբ նա վրդովվում էր, բորբոքվում և անիծում մեկին ու մյուսին: Բայց արդյոք երկա՞ր էր տևում այդ: Անմիջապես նրա վրդովմունքին չէր հետևում մեղմ մարդասիրական ժպիտը և նրա անեծքին՝ օրհնությունը:

Համաձայն եմ, որ նա շատ ուներ տկարություններ իբրև իշխանավոր, բայց չէ՞ որ միևնույն ժամանակ ուներ և արժանավորություններ իբրև Մեծ Մարդ: Կաթողիկոսը մեքենա է, մարդը գերիշխան:

***

Խրիմյանը վախճանվեց ութսունյոթ տարեկան հասակում: Զարհուրելի է ամբոխի հոգեբանությունը: Այդ եզական մարդու մահն այնքան վիշտ չպատճառեց, որքան նրա Կաթողիկոս ընտրվիլը՝ ուրախություն: